

Ամսօր

հեղինակ՝ [Չեմս Զոլա](#)
թարգմանիչ՝ Արամ Արսենյան (անգլերենից)
աղբյուր՝ [«Դուրյինգիներ»](#)

Ութը տարի առաջ էր, որ ընկերոջը ճանապարհեց Նորթ-Ուոլ նավահանգստից եւ բարի ճանապարհ մաղթեց նրան: Գալահերը հաջողության էր հասել: Դա անմիջապես երեւում էր նրա ճանապարհորդական տրամադրությունից, լավ կարված զոլավոր կոստյումից եւ անբռնազբոսիկ տոնից: Քչերն ունեն նրա տաղանդը և թերևս ավելի քչերն են, որ նման հաջողությունից հետո չեն փչանում: Գալահերը բարի նպատակներ ուներ և արժանի էր հաղթանակի: Այդպիսի ընկեր ունենալն ինչ-որ բան նշանակում էր:

Նախանաշից հետո Փոքրիկ Չանդլերի մտքերը պտտվում էին միայն ու միայն Գալահերի հետ հանդիպման, Գալահերի հրավերի և Լոնդոն մեծ քաղաքի շուրջ, ուր Գալահերն էր ապրում: Նրան Փոքրիկ Չանդլեր էին կոչում, որովհետև փոքրիկի տպավորություն էր թողնում, չնայած միջառասակից մի քիչ էր ցածր: Ձեռքերը փոքր էին ու սպիտակ, ինքը թուլակազմ էր, ձայնը՝ ցածր, շարժումները՝ նուրբ: Նա չափազանց հոգատար էր իր բաց գույնի մետաքս մագերի ու բեղի նկատմամբ, իսկ թաշկինակից միշտ անուշաբույր օծանելիքի թույլ հոտ էր բուրում: Եղունգաբները կատարյալ ձև ունեին, իսկ ժպտալիս երևում էր նրա, մանկական ատամների պես սպիտակ, ատամնաշարը:

Դատական պալատի իր գրասենյակում նստած նա մտածում էր, թե այդ ութ տարիներն ինչ փոփոխություններ են բերել: Ընկերը, որին նա միշտ տեսել էր մաշված հագուստով ու կարիքավոր, հիմա լոնդոնյան մամուլի աչքի ընկնող դեմքերից էր: Փոքրիկ Չանդլերը երբեմն ընդհատում էր իր հոգնեցուցիչ գրագրությունը և պատուհանից դուրս նայում: Աշնանային բոսորագույն վերջալույսը ծածկել էր ծառուղիներն ու գազոնները, ողորմաճաբար իր ոսկե փոշով շաղել էր թափափված դայակներին ու գառամյալ ծերունրներին, որ ննջում էին նստարաններին, խաղում էր այն ամենի վրա, ինչ շարժվում էր՝ երեխաների, որ ճիչերով վազվզում էին մանրախճով ծածկված արահետներով, անցորդների, որ կտրում-անցնում էին գրոսայգին: Փոքրիկ Չանդլերը հետևում էր այդ տեսարանին ու խորհրդածում կյանքի մասին և (ինչպես միշտ, երբ մտածում էր կյանքի մասին) տխրեց: Նրան համակեց մի մեղմ թախիժ: Չգաց, թե որքան անօգուտ է ճակատագրի դեմ պայքարելը, այդպիսին էր իմաստության բեռը, որ կտակել էին նրան դարերը:

Հիշեց տունը, գրադարակների վրա շարված պոեզիայի հատորները: Դրանք գնել էր դեռևս ամուրի ժամանակ և երեկոները, նախասենյակի կողքի փոքրիկ սենյակում նստած, նրա մեջ հաճախ ցանկություն էր առաջանում դրանցից մեկը վերցնել գրադարակից և բարձրաձայն ընթերցել կնոջ համար: Բայց ամեն անգամ անվճռականությունը նրան ետ էր պահում, և գրքերն այդպես էլ մնում էին գրադարակների վրա: Ժամանակ առ ժամանակ մտքում բանաստեղծություններ էր կրկնում, և դա նրան հանգստացնում էր:

Երբ աշխատանքի ժամը վերջացավ, նա վեր կացավ և բարեխղճորեն հրաժեշտ տվեց գրասեղանին ու գործընկերներին: Դուրս եկավ Դատական պալատի միջնադարյան կամարի տակով՝ կոկիկ հագնված, համեստ մի կերպարանք, և արագորեն ներքև շարժվեց չենրիեթ սթրիթով: Ոսկեգույն վերջալույսը հանգչում էր, օրը՝ ցրտում: Փողոցում վիստում էին կեղտոտ, ցնցոտիավոր երեխաները: Նրանք կանգնել կամ վազվզում էին կամրջի վրա, լայն բացված դռների դիմաց սողում էին աստիճաններն ի վեր և կամ մկների նման թաքնվում շենքերի վրա: Փոքրիկ Չանդլերը նրանց չէր նկատում: Մռայլ, երևակայական պալատների հովանու տակ, ուր հնում զվարճանում էր դուրբիկյան ազնվականությունը, նա իր համար հեշտությամբ ճանապարհ էր հարթում այդ վիստացող կծիկի միջով: Անցյալի հիշողությունները նրան չէին անհանգստացնում, որովհետև միտքը լեցուն էր ներկայի խինդով:

Նա երբեք «Կոռլեսում» չէր եղել, բայց այդ անվան արժեքը լավ գիտեր: Գիտեր, որ մարդիկ այնտեղ էին գնում թատրոնից հետո ոստրե և լիկյոր վայելելու, լսել էր, որ այնտեղ մատուցողները ֆրանսերեն ու գերմաներեն են խոսում: Գիշերներն այնտեղով արագ քայլելիս տեսել էր, թե ինչպես են կառքերը մոտենում մուտքին, և ճոխ հագնված կանայք, իրենց երկրպագուների ուղեկցությամբ, իջնում ու արագ անհետանում են դռների ետևում: Նրանց հագին խշխշացող զգեստներ ու թեթև մանտոներ էին: Դեմքերը ծածկված էին դիմափոշիով, եւ կառքից իջնելիս բռնում էին փեշերը, կարծես վախեցած Ատլանտներ լինեին: Մովորաբար այդտեղով անցնելիս Չանդլերը գլուխը չէր շրջում նրանց նայելու: Նա սովորություն ուներ նույնիսկ ցերեկները փողոցում արագ քայլել, իսկ երբ պատահում էր, որ ուշ գիշերին քաղաքի կենտրոնում էր լինում, համարյա վազում էր՝ միաժամանակ և՛ վախ, և՛ հուզում ապրելով: Երբեմն, հենց ինքն էր վախենալու առիթ փնտրում: Ընտրում էր ամենամութ ու ամենանեղ փողոցները և մինչ անվախ առաջ էր շարժվում, լռությունը, որ սփռված էր իր ոտնահետքերի տակ, վախեցնում էր նրան, թափառող լուռ կերպարանքներն անհանգստացնում էին, իսկ ժամանակ առ ժամանակ լսվող ծիծաղի ցածր, վաղանցիկ ձայնից դողում էր տերևի պես:

Նա թեքվեց աջ, դեպի Զեփել սթրիթ: Եվ հիմա, Իզնատիուս Գալահերը լոնդոնյան մամուլի աստղերից է: Ո՛վ կհավատար դրան ութ տարի առաջ: Սակայն գնալով ետ, դեպի անցյալը, Փոքրիկ Չանդլերն ընկերոջ մեջ կարողանում էր տեսնել ապագայում մեծությունն դառնալու շատ ու շատ հատկանիշներ: Ասում էին, որ Իզնատիուս Գալահերը դատարկապորտի մեկն է եղել: Իհարկե, այն ժամանակ նա թրեւ էր գալիս կործանված մարդկանց հետ, շատ էր խմում և աջ ու ձախ պարտքով փող վերցնում: Վերջիվերջո մի մութ գործի մեջ էր ընկել՝ ինչ-որ փողային գործարք, առնվազն այս էր նրա փախուստի մասին եղած վերսիսներից մեկը:

Սակայն ոչ ոք չէր կարող ժխտել նրա տաղանդը: Իզնատիուս Գալահերի մեջ միշտ ինչ-որ... մի բան կար, որ մարդկանց մոտ հարգանք էր առաջացնում, հակառակ իրենց կամքի:

Նույնիսկ այն ժամանակ, երբ նրա արմունկները գջլտված էին, իսկ գրպանը՝ դատարկ, նա չէր կորցնում կայտառությունը: Փոքրիկ Չանդլերը հիշեց (և այդ հիշողությունից նրա այտերը հպարտության մեղմ երանգ էին ստանում), թե ինչ էր ասում Իզնատիուս Գալահերը մի անգամ, երբ գործերը վատ էին:

— Տղաներ, մի պահ ընդմիջում,— անփութորեն ասում էր նա,— ու ես գլխիս գոռ կտամ:

Այս էր ողջ Իզնատիուս Գալաիերը և, սատանան տանի, անկարելի էր նրանով չհիանալ: Փոքրիկ Չանդլերն արագացրեց քայլերը, քանի որ կյանքում առաջին անգամ իրեն բարձր դասեց այն մարդկանցից, որոնց կողքով անցնում էր: Կյանքում առաջին անգամ նրա հոգին ըմբոստացավ Քեփել պթիթի գորշ աղքատության դեմ: Ոչ մի կասկած չկա՝ եթե ուզում ես հաջողության հասնել, հեռացի՛ր այստեղից: Դուրսիցում ոչինչ անել չես կարող: Գրաթանի կամուրջով անցնելիս Չանդլերը նայեց գետին, ցածր ափերի խղճուկ, աղքատ, կիսավեր տներին: Դրանք հիշեցնում էին փոշոտ ու մրոտ վերարկուներ հագած թափառաշրջիկների մի խումբ, որ խռնվել էր գետափի երկարությամբ եւ, արևամուտի համայնապատկերով դիտված, սպասում էր գիշերվա առաջին ցրտին, որպեսզի արթնանա, իրեն թափ տա ու հեռանա: Նա մտածում էր, արդյոք չի՞ կարող այս բոլորը բանաստեղծությամբ արտահայտել: Հավանաբար Գալաիերը կկարողանար այդ բանաստեղծությունը տպագրել լոնդոնյան թերթերից մեկում: Կարո՞ղ է որևէ անսովոր բան գրել: Համոզված չէր, թե ինչ միտք էր ուզում արտահայտել, սակայն այն գիտակցումը, որ բանաստեղծական ոգեշնչումը պարուրել էր իրեն, նրա մեջ մանկավայել հույս էր ծնել: Միտ առած առաջ շարժվեց:

Իր քայլերին համընթաց նա, կարծես, մոտենում էր Լոնդոնին, հեռանում իր լրջմիտ կյանքից: Նրա մտքի հորիզոնում մի լույս թրթռաց: Այնքան էլ ծեր չէր՝ երեսուներկու տարեկան: Նրա եռանդը հիմա է, որ պետք է դրսևորվի: Այնքան տրամադրություններ եւ տպավորություններ կային, որ ուզում էր արտահայտել բանաստեղծական տողերով: Այդ ամենը զգում էր իր մեջ: Նա փորձեց իր հոգու խորքը նայել, ստուգելու՝ արդյո՞ք դա բանաստեղծի հոգի էր: Եվ գտավ, որ իր խառնվածքում գերիշխողը թախիծն է, սակայն դա հավատի պոռթկումներով ամոքված, ճակատագրին հյու և անմեղ երջանկությամբ լի թախիծ էր: Եթե նա կարողանա այդ ամենը պատկերել բանաստեղծությունների գրքում, մարդիկ, հավանաբար, կունկնդրեն իր ձայնը: Իհարկե հասկանում էր, որ երբեք հանրաճանաչ չի լինի: Նա չէր կարող նվաճել ամբոխը, բայց իր հոգուն հարազատ մարդկանց մի փոքր խումբ կգնահատեր նրան:

Ամենայն հավանականությամբ անգլիական քննադատներն իր բանաստեղծությունների թախծալի երանգը կվերագրեն կելտական դպրոցին: Բացի դրանից, ինքն էլ կակնարկի այդ մասին: Նա սկսեց իր գրքի ապագա գրախոսականից նախադասություններ եւ դարձվածներ հորինել. «Միտոր Չանդլերն օժտված է հեշտ ու նրբագեղ բանաստեղծություն ստեղծելու շնորհով... Նրա բանաստեղծությունները համակված են մտախոհ տխրությամբ... Կելտական նրբերանգ...»: Ափսո՛ս, որ անունը իռլանդական չէր: Գուցե ավելի լավ կլիներ իր անվան կողքին մոր ազգանո՞ւնն ավելացնել. Թոմաս Մելոնի Չանդլեր, կամ ավելի լավ է՝ Թ. Մելոնի Չանդլեր: Այդ մասին կխոսի Գալաիերի հետ:

Նա այնքան էր տարված երազանքներով, որ իր փողոցն անցավ եւ ստիպված էր ետ վերադառնալ: Երբ մոտեցավ «Կոռլեսին», հուզմունքը նախկին ուժով համակեց նրան, եւ նա անհամարձակ կանգ առավ մուտքի առաջ: Վերջապես դուռը բաց արեց ու ներս մտավ:

Բարի լույսն ու աղմուկը նրան մի պահ գամեցին դռանը:

Նայեց շուրջը, բայց աչքերը շաղվում էին բազմաթիվ կարմիր ու կանաչ բաժակների փայլից: Նրան թվաց, թե բարը լի է մարդկանցով, և բոլորը հետաքրքրությամբ իրեն են նայում: Արագ աջ ու ձախ նայեց (մի քիչ խոժոռվելով, կարծես թե շատ լուրջ գործով էր եկել), բայց երբ հայացքը փոքր-ինչ պարզվեց, տեսավ, որ ոչ ոք չի նայում իր կողմը, իսկ

այնտեղ վաճառասեղանին հենված և ոտքերն իրարից հեռու դրած, կանգնել էր ինքը՝ Իզնաստիուս Գալահերը:

— Հելլո՛, Թոմի: Նստի՛ր, հերոս: Ի՞նչ ենք խմելու: Ի՞նչ կուզեիր: Ես վիսկի եմ խմում, սրա նմանը Լոնդոնում էլ չես ճարի: Սողայո՞վ: Թե՛՞ գելտերյան: Հանքային չե՛ս սիրում: Ես էլ: Համը փչացնում է... Հե՛յ, գարսո՛ն, բարի եղիր, մեզ երկու վիսկի բեր, երկու հատ կես... Դե, ի՞նչ հաշոդություններ ես ունեցել մեր վերջին հանդիպումից հետո: Ողորմած աստված, ինչպե՛ս ենք ծերանում: Ասա՛ տեսնեմ, շա՛տ է երևում, որ արդեն ծեր եմ: Գազաթս սկսել է սպիտակել ու նոսրանալ, այդպես չե՛:

Իզնաստիուս Գալահերը հանեց գլխարկն ու ցույց տվեց կարճ կտրած մազերով մեծ գլուխը: Դեմքը լայն էր, դժգույն և լավ սափրած: Կապտասև աչքերը, որ ընդգծում էին հիվանդագին դժգունությունը, կրակի պես փայլում էին նրա նարնջագույն փողկապի վերևում: Այս երկու հակադիր գծերի միջև շուրթերը շատ երկար, անձև ու անգույն էին թվում: Նա կախեց գլուխը և երկու մատներով կարեկցաբար շոյեց նոսրացող մազերը: Փոքրիկ Չանդլերը բացասաբար շարժեց գլուխը: Իզնաստիուս Գալահերը նորից դրեց գլխարկը:

— Ուժասպառ ես լինում,— ասաց,— ինչի՞ է նման լրագրողի կյանքը: Միշտ շտապողականություն և անապարանք, միշտ նյութերի որոնում, որ երբեմն էլ չես գտնում: Իսկ հետո՝ մշտական հետապնդում նոր բան գտնելու համար: Դե, ես էլ որոշեցի գոնե մի քանի օրով գրողի ծոցն ուղարկել շարվածասյուններն ու գրաշարներին: Գիտե՛ս որքան ուրախ եմ, որ հարազատ օջախս եմ վերադարձել: Երբեմն անհրաժեշտ է չե՛, լավ զգալ, մի քիչ հանգստանալ: Կարծես հարություն առա, երբ հայտնվեցի իմ հարազատ, կեղտոտ Դուբլինում: Խնդրեմ, Թոմի, խմիր: Չո՛ւր: Ասա, ինչքա՞ն:

Փոքրիկ Չանդլերը թողեց, որ իր վիսկիին շատ ջուր խառնեն:

— Օգուտդ չգիտես, տղաս,— ասաց Իզնաստիուս Գալահերը,— ես մաքուրն եմ խմում:

— Սովորաբար քիչ եմ խմում,— համեստորեն պատասխանեց Փոքրիկ Չանդլերը:— Երբեմն կես կամ մի բաժակ, եթե հանդիպում եմ հին ընկերներիցս որևէ մեկին, սա է ամբողջը:

— Դե,— ուրախ ասաց Իզնաստիուս Գալահերը,— խմենք մեր հին ժամանակների ու հին ծանոթության կենացը:

Նրանք բաժակներն իրար զարկեցին ու խմեցին:

— Այսօր նախկին հրոսակախմբից մի քանիսին եմ տեսել, — ասաց Իզնաստիուս Գալահերը,— Օ՛հարա՛ն ինձ ինչ-որ դուր չեկավ: Ինչո՞վ է զբաղվում:

— Ոչ մի բանով,— պատասխանեց Փոքրիկ Չանդլերը,— շան օրն է ընկել:

— Բայց Հոգենը կարծես լավ է տեղավորվել: Այդպես չե՛:

— Այո, ծառայում է Հոդային հանձնաժողովում:

— Մի գիշեր Լոնդոնում հանդիպեցի: Ինչպես երևում է, բարգավաճում է... Խե՛ղճ Օ՛հարա: Հավանաբար իրեն հարբեցողության է տվել:

— Եվ ոչ միայն դա,— չոր ասաց Փոքրիկ Չանդլերը: Իզնաստիուս Գալահերը ծիծաղեց:

— Թ՛ո՛մի,— ասաց,— տեսնում եմ, որ մազաչափ անգամ չես փոխվել: Դեռ այն նույն լուրջ պատանին ես, որ կիրակի առավոտները խրատներ էր կարդում իմ գլխին, երբ սարսափելի գլխացավով և փառակալած լեզվով թավալվում էի անկողնում: Քեզ հարկավոր է մի քիչ թափառել աշխարհում: Մի՞թե ոչ մի տեղ չես ճանապարհորդել:

— Մեն կղզում եմ եղել,— ասաց Փոքրիկ Չանդլերը: Իզնատիուս Գալահերը ծիծաղեց:

— Մեն կղզո՛ւմ,— ասաց,— գնա Լոնդոն կամ Փարիզ, ավելի լավ է Փարիզ: Դա քեզ մեծ օգուտ կտա:

— Դու Փարիզում եղե՛ր ես:

— Այն էլ ինչպե՛ս: Այնտեղ բավականին զվարճացել եմ:

— Իսկ Փարիզն իսկապե՛ս այդքան գեղեցիկ է,— հարցրեց Փոքրիկ Չանդլերը:

Նա մի կում արեց, իսկ Իզնատիուս Գալահերը բաժակը դատարկեց մինչև հատակը:

— Գեղեցի՛կ,— ասաց Իզնատիուս Գալահերը, այդ բառը շատ դանդաղ արտասանելով և ախորժանքով վայելելով խմածի բուրմունքը:— Հասկանո՞ւմ ես, այնքան էլ գեղեցիկ չէ: Ոչ. իհարկե գեղեցիկ է... Բայց կարևորն այնտեղի կյանքն է: Ոչ մի քաղաք չի կարող իր ուրախությամբ, աղմուկով, զվարճալիքներով մրցել Փարիզի հետ...

Փոքրիկ Չանդլերը վերջացրեց իր բաժին վիսկին և ոչ այնքան հեշտությամբ վերջապես որսաց բարմենի հայացքը: Նա նորից վիսկի պատվիրեց:

— Մուլեն Ռուժում եմ եղել,— շարունակեց Իզնատիուս Գալահերը, երբ բարմենն արդեն տարել էր բաժակները,— և այցելել բոհեմական բոլոր սրճարանները: Ա՛յ, դա ուրիշ բան է: Դե՛, քեզ նման հավատացյալի համար չէ:

Փոքրիկ Չանդլերը լուռ էր, մինչև որ բարմենը վերադարձավ բաժակները ձեռքին: Հետո իր բաժակը թեթև զարկեց ընկերոջ բաժակին և կրկնեց նախկին կենացը: Նա սկսում էր թույլ հուսախաբություն ապրել: Գալահերի շեշտված բառերը, մտքերն արտահայտելու ձևը նրան դուր չէին գալիս: Ընկերոջ մեջ ինչ-որ գռեհիկ բան կար, որ մինչ այդ չէր նկատել: Հավանաբար, դա արդյունքն էր այն բանի, որ նա ապրում էր Լոնդոնում, մամուլում տիրող զգվռոցի ու մրցակցության մեջ: Սակայն նոր, անպարկեշտ վարքի ետևում դեռ զգացվում էր նրա նախկին հմայքը: Եվ, վերջապես, Գալահերն ապրել էր, աշխարհ տեսել: Փոքրիկ Չանդլերը նախանձով նայեց ընկերոջը:

— Փարիզում ընդհանրապես ուրախ է,— ասաց Իզնատիուս Գալահերը,— նրանք սիրում են կյանքի վայելքները: Չե՛ս գտնում, որ ճիշտ են: Եթե ուզում ես իսկական կյանքով ապրել, պետք է Փարիզ գնաս: Եվ գիտես, փարիզեցիները շատ լավ են վերաբերվում իռլանդացիներին: Երբ այնտեղ իմացան, որ Իռլանդիայից եմ, քիչ էր մնում կուլ տային ինձ, հասկանո՞ւմ ես:

Փոքրիկ Չանդլերը չորս-հինգ կում արեց:

— Ասա ինձ, ճի՛շտ է, որ Փարիզն այդքան... անբարոյական է, որքան ասում են:

Իզնատիուս Գալահերը իմաստալից բարձրացրեց աջ ձեռքը:

— Բոլոր տեղերում էլ անբարոյականություն է տիրում, իսկ Փարիզի մասին, իհարկե, կարելի է ավելի սուր բաներ ասել: Օրինակ, այցելիր ցանկացած ուսանողական

պարահանդեսներից մեկը: Տեսնելու շատ բան կա, հատկապես երբ կաքավիկները ողևորվում են: Հուսով եմ, հասկանո՞ւմ ես, թե ում մասին եմ խոսում:

— Դրանց մասին լսել եմ,— ասաց Փոքրիկ Չանդլերը: Իզնատիուս Գալահերը դատարկեց բաժակն ու գլուխը թափահարեց:

— Է՛հ,— ասաց,— ինչ ուզում ես արա, բայց փարիզուհու նման կին չկա՝ թե՛ սրամտությամբ և թե՛ շուքով:

— Ուրեմն դա բարոյագուրկ քաղաք է,— երկչոտ համառությամբ խոսեց Փոքրիկ Չանդլերը,— իհարկե, Լոնդոնի կամ Դուրլինի համեմատ:

— Լոնդոն,— ծոր տվեց Իզնատիուս Գալահերը,— նույն բանն է: Հարցրու Հոգենին, սիրելիս: Երբ ինձ մոտ էր, Լոնդոնի հարցում մի քիչ լուսավորեցի նրան: Նա կբացի քո աչքերը... Լսիր, Թոմի, վիսկին կու՛մ-կու՛մ մի անի, դա քեզ համար փունջ չէ, միանգամից խմիր:

— Չէ, գիտես ինչ...

— Դե վերջ տուր, քեզ ոչինչ չի անի: Ի՞նչ պատվիրենք: Կարծում եմ նույնը:

— Դե լավ... համաձայն եմ:

— Fracois, մեկական բաժակ էլ... Ծխե՛նք, Թոմի՛:

Իզնատիուս Գալահերն հանեց իր ծխախոտատուփը: Երկու ընկերներն էլ վառեցին սիգարները և լուռ փնջացնում էին, մինչև կրեթեին խմիչքը: — Քեզ կասեմ իմ կարծիքը,— ասաց Իզնատիուս Գալահերը, վերջապես հայտնվելով ծխի ամպի միջից, որտեղ նա մի պահ անհայտացել էր,— սա խելագար աշխարհ է: Էլ ուր մնաց անբարոյականությունը: Այնպիսի դեպքերի մասին եմ լսել, ի՞նչ լսել, ես ինքս գիտեմ դրանց մասին... անբարոյականության... դեպքեր...

Իզնատիուս Գալահերը մտահոգ փստացրեց սիգարը, հետո հանդարտ, էպիկական տոնով սկսեց ընկերոջը նկարագրել նեխվածության այն պատկերները, որ թագավորում էին արտասահմանում: Թվարկեց մի քանի մայրաքաղաքների արատավոր կողմերը եւ, թվում էր, հակված էր առաջնության դափնին հանձնելու Բեռլինին: Որոշ բաների համար նա չէր կարող երաշխավորել (ընկերներն էին պատմել), բայց մնացածը սեփական փորձից էր իմացել: Նա չէր խնայում ո՛չ կոչում, ո՛չ աստիճան: Մերկացնում էր եվրոպական եկեղեցիների շատ գաղտնիքներ, նկարագրում բարձր հասարակությունում մոդայիկ դարձած մի քանի այլանդակություններ և վերջացրեց նրանով, որ մանրամասն պատմեց անգլիական մի դքսուհու մասին տարածված այն պատմությունը, որի ճշմարիտ լինելու մեջ ինքը համոզված էր: Փոքրիկ Չանդլերն ապշել էր:

— Այո՛,— ասաց Իզնատիուս Գալահերը,— այստեղ՝ մեր հին, հետամնաց Դուրլինում այդպիսի բաների մասին նույնիսկ չեն էլ լսել:

— Մեզ մոտ, ինչպես երևում է,— ասաց Փոքրիկ Չանդլերը,— այդ բոլորից հետո, ինչ տեսել ես, քեզ տխուր է թվում:

— Գիտես,— ասաց Իզնատիուս Գալահերը,— ինձ համար այստեղ լինելը հանգստություն է: Եվ, վերջապես, ինչպես ասում են, սա իմ հայրենի տունն է, այդպես չէ՞: Ինչ էլ որ լինի, այն չսիրել չես կարող: Այդպիսին է մարդկային բնավորությունը... Դե՛ լավ,

քո մասին պատմիր: Հոգեհոգ ինձ ասել է, որ դու... զգացել ես ամուսնական երանությունը: Երկու տարի առաջ, այո՞:

Փոքրիկ Չանդլերը կարմրեց ու ժպտաց:

— Այո,— ասաց նա,— մայիսին լրացավ ամուսնությանս մեկ տարին:

— Կարծում եմ, այնքան էլ ուշ չէ իմ անկեղծ բարեմաղթությունները հայտնելու,— ասաց Իզնատիուս Գալահերը,— հասցեդ չգիտեի, թե չէ այս ամենը ժամանակին կանեի:

Նա մեկնեց ձեռքը, և Փոքրիկ Չանդլերը սեղմեց այն:

— Դե՛, Թոմի,— ասաց Գալահերը,— քեզ և քո ընտանիքին ցանկանում եմ ամենայն երջանկություն կյանքում, կույտերով փող, և որ դու այնքան ապրես, մինչև ես ինքս քեզ գնդակահարեմ: Սա քեզ ցանկանում է քո անկեղծ ընկերը, հին ընկերը: Դու այդ գիտե՛ս:

— Գիտեմ,— պատասխանեց Փոքրիկ Չանդլերը:

— Երեխաներ կա՞ն,— հարցրեց Իզնատիուս Գալահերը: Փոքրիկ Չանդլերը կրկին կարկամեց:

— Մի երեխա ունենք,— պատասխանեց:

— Տղա՞, թե աղջիկ:

— Մանչուկ:

Իզնատիուս Գալահերը ձեռքն ուժով խփեց ընկերոջ մեջքին:

— Ապրե՛ս,— ասաց,— չէի կասկածում, Թոմի:

Փոքրիկ Չանդլերը ժպտաց, շփոթված նայեց իր բաժակին եւ կծեց ներքևի շուրթը մանկան իր երեք սպիտակ ատամներով:

— Հուսով եմ, որ մի երեկո կայցելես մեզ,— ասաց նա,— կինս անչափ ուրախ կլինի: Մի քիչ կնվազենք և...

— Շա՛տ շնորհակալ եմ, սիրելիս,— ասաց Իզնատիուս Գալահերը,— շատ եմ ցավում, որ ավելի շուտ չենք հանդիպել: Սակայն վաղը երեկոյան մեկնում եմ:

— Գուցե այս երեկո՞...

— Շա՛տ եմ ցավում, սիրելիս: Տեսնո՞ւմ ես, մենակ չեմ, ինձ հետ է նաև ընկերս, նա էլ հետաքրքիր երիտասարդ է, և որոշել ենք միասին մի քիչ թղթախաղով զբաղվել: Թե՛ չէ...

— Դե՛, այդ դեպքում...

— Բայց ո՞վ գիտե,— ասաց Իզնատիուս Գալահերը մտահոգված,— քանի որ այս տարի սառույցը կտրեցի, գուցե հաջորդ տարի նորից գամ: Հետաձգումը չի փչացնի հաճույքը:

— Շատ լավ,— ասաց Փոքրիկ Չանդլերը,— երբ հաջորդ անգամ գաս, միասին մի ամբողջ երեկո կանցկացնենք: Որոշված է, չէ՞:

— Այո, հաստատ,— պատասխանեց Իզնատիուս Գալահերը,— եթե միայն հաջորդ տարի գամ, ապա parole d'honneur

— Դրա համար,— ասաց Փոքրիկ Չանդլերը,— ե՛կ մի-մի բաժակ էլ խմենք:

Իզնատիուս Գալահերը հանեց ոսկյա մեծ ժամացույցն ու նայեց: — Եթե միայն վերջինն է,— ասաց,— որովհետև, ինչպես գիտես, ինձ սպասում են:

— Վճռված է, որ վերջինն է,— ձայնը բարձրացրեց Փոքրիկ Չանդլերը:

— Դե լավ,— ասաց Իզնատիուս Գալահերը,— այդ դեպքում արի մի հատ էլ deo an derius խմենք, կարծեմ մի գավաթ վիսկիին ժողովրդական լեզվով այդպես են կոչում:

Փոքրիկ Չանդլերը խմիչք պատվիրեց: Կարմրությունը, որ մի քանի րոպե առաջ հայտնվել էր նրա դեմքին, տարածվեց երեսով մեկ: Նա միշտ շատ շուտ էր կարմրում, իսկ հիմա շոգում էր և մի փոքր գրգռված էր: Երեք գավաթ վիսկին գլխին էր խփել, իսկ Գալահերի ուժեղ սիգարը մթագնել էր ուղեղը, նա թուլակազմ էր և միշտ գուսպ: Ութ տարվա բաժանումից հետո հանդիպել Գալահերին, Գալահերի հետ միասին Կոռլեսի մոտ նստել՝ լույսի և աղմուկի մեջ, Գալահերի պատմությունները լսել, Գալահերի աստանդական ու փառահեղ կյանքին, թեկուզ և շատ կարճ ժամանակով, մասնակցել— այս ամենը նրա համար մի արկած էր, որ խախտել էր նրա զգայուն խառնվածքի հավասարակշռությունը:

Չանդլերը շատ սուր կերպով զգաց ընկերոջ ու իր սեփական կյանքի միջև եղած հակադրությունը եւ գտավ, որ դա անարդար է: Գալահերն իրենից ցածր էր թե՛ ծագումով և թե՛ կրթությամբ: Նա համոզված էր, որ ինչ-որ բան կարող էր ավելի լավ անել, քան ընկերը երբևէ կաներ, ինչ-որ բան, որ ավելի բարձր էր, քան էժանագին լրագրությունը, եթե միայն առիթ լիներ: Սակայն ի՞նչն էր փակում նրա ճանապարհը: Իր չարաբաստիկ երկչոտությունը: Նա ցանկանում էր որևէ ձևով վրեժ լուծել, պաշտպանել իր տղամարդկային արժանապատվությունը: Նա յուրովի էր հասկանում Գալահերի կողմից իր հրավերի մերժումը: Գալահերը պարզապես մեծ պատիվ էր անում նրան իր բարեկամությամբ, ինչպես Իռլանդիային՝ իր այցով:

Բարմենը վիսկի բերեց: Փոքրիկ Չանդլերը բաժակներից մեկը ընկերոջ կողմը հրեց և վճռականորեն վերցրեց մյուսը: — Ո՞վ գիտե,— ասաց նա, երբ իրար էին զարկում բաժակները,— մյուս տարի, երբ գաս, գուցե բախտ կունենամ երկար կյանք ու երջանկություն մաղթելու տեր և տիկին Իզնատիուս Գալահերներին:

Իզնատիուս Գալահերը խմելով վիսկին, մի աչքն արտահայտիչ կերպով կկոցեց բաժակի վրա: Երբ վերջացրեց խմելը, վճռականորեն չպպացրեց, բաժակը սեղանին դրեց ու ասաց.

— Մի՛ փորձիր երևակայել, սիրելիս: Նախ և առաջ ես մի լավ կզվարճանամ և հաճույքիս համար կապրեմ, կյանք ու աշխարհ կտեսնեմ, իսկ հետո արդեն վիզս լծի տակ կդնեմ, եթե, իհարկե, երբևէ այդ անեմ:

— Մի օր կանես,— հանգիստ ասաց Փոքրիկ Չանդլերը: Իզնատիուս Գալահերը իր կապտասև աչքերը հառեց ընկերոջ կողմը:

— Այդպե՛ս ես կարծում:

— Վիզդ լծի տակ կդնես,— վստահորեն կրկնեց Փոքրիկ Չանդլերը,— ինչպես բոլորը, եթե, իհարկե, քո ուզած աղջկան գտնես:

Նա այդ ասաց մի փոքր մարտական տոնով և զգաց, որ իրեն մատնեց, բայց, չնայած այտերի կարմրությունը թանձրացել էր, դիմացավ ընկերոջ սևեռուն հայացքին:

Իզնատիուս Գալահերը մի պահ ուշադիր նրան նայեց, ապա ասաց.

— Եթե դա երբևէ պատահի, կարող ես քո վերջին շիլլինգով գրագ գալ, որ ոչ մի ավելորդ զգացմունք չի լինի: Ես կամուսնանամ միայն փողի հետ: Կամ նա բանկում չաղիկ ընթացիկ հաշիվ կունենա, կամ էլ թող գրողի ծոցը գնա:

Փոքրիկ Չանդլերը գլուխն օրորեց.

— Դե, մարդ աստծո,— ասաց Իզնատիուս Գալահերը կրքոտությամբ,— ի՞նչ էիր կարծում: Ինձ մնում է միայն մի բառ ասել և հենց վաղը թե՛ կին և թե՛ փող կունենամ: Չե՞ս հավատում: Բայց գիտեմ, չե՞ որ ասում եմ: Հարյուրավոր, ի՞նչ եմ ասում, հազարավոր հարուստ գերմանուհիներ և հրեուհիներ կան, որ համարյա պայթում են փողից և շատ ուրախ կլինեն... Մի քիչ սպասիր, բարեկամս: Կտեսնես, թե ինչպես եմ պարզելու առագաստներս: Եթե որևէ գործ բռնեցի, մի կասկածիր, սխալ չեմ անի: Սպասի՛ր, կտեսնես:

Նա բաժակը թափով տարավ բերանը, դատարկեց և բարձրաձայն ծիծաղեց: Հետո մտահոգված շուրջը նայեց և խոսեց ավելի հանգիստ տոնով.

— Բայց ես չեմ շտապում: Նրանք կսպասեն: Չեմ պատրաստվում ինձ միայն մի կնոջ հետ կապել, հասկանո՞ւմ ես,— նա շարժեց շուրթերը, կարծես համտեսում էր ինչ-որ բան եւ ծամածռեց դեմքը:

— Կարծում եմ նույնն է, ինչ-որ թթված գարեջուրը:

Փոքրիկ Չանդլերը երեխան ձեռքին նստել էր նախասենյակին կից սենյակում: Խնայողության նպատակով սպասուհի չէին պահում, և Մոնիկան՝ Աննիի փոքր քույրը, առավոտյան ու երեկոյան մեկական ժամով գալիս էր նրանց օգնելու տնտեսության գործերում: Բայց Մոնիկան արդեն վաղուց տուն էր վերադարձել: Իննին քառորդ էր պակաս: Փոքրիկ Չանդլերը թեյից ուշացել էր և, բացի դրանից, մոռացել էր Բյուլիի խանութից Աննիի համար սուրճ բերել: Իհարկե, կինը վիրավորվել էր և ամուսնու հետ համարյա չէր խոսում: Աննին ասաց, որ ոչինչ չի խմի, սակայն երբ մոտեցավ փողոցի անկյունում գտնվող կրպակի փակվելու ժամը, նա որոշեց անձամբ գնալ քառորդ ֆունտ թեյ և երկու ֆունտ շաքար գնելու: Քնած երեխային ճարպկորեն դրեց ամուսնու ձեռքերին ու ասաց. — Պահի՛ր: Միայն թե չարթնացնես:

Սեղանին մի փոքրիկ, ճենապակյա լուսամփոփ էր վառվում, եւ լույսն ընկնում էր ծածանքավոր եղջյուրով շրջանակված լուսանկարի վրա: Աննիի լուսանկարն էր: Փոքրիկ Չանդլերը նայեց նրան՝ հայացքը սևեռելով նուրբ, իրար պինդ սեղմված շուրթերին: Հագին բաց երկնագույն բլուզն էր, որ ինքն էր նվիրել մի կիրակի: Տասը շիլլինգ և տասնմեկ պենս արժեր, բայց որքան տանջալի հուզումներ էր պատճառել իրեն: Ինչպե՞ս էր ինքը տանջվում այդ օրը, երբ սպասում էր խանութի մոտ, որպեսզի այն դատարկվեր, կամ երբ կանգնել էր վաճառատեղանի մոտ՝ փորձելով համարձակ երևալ, մինչ վաճառողուհին նրա առջև դարսում էր կանացի բլուզներ, կամ երբ դրամն էր վճարում և մոռացավ մանրը վերցնել, և զանձապահուհին նրան ետ կանչեց, և վերջապես, երբ խանութից դուրս գալով կարմրած դեմքը ծածկելու համար ստուգում էր՝ արդյո՞ք փաթեթն ամուր է կապված: Տուն վերադառնալով բլուզը տվեց Աննիին, որը համբուրեց նրան ու ասաց, որ շատ գեղեցիկ է, պերճաշուք, բայց գինը լսելով նետեց սեղանին և գտավ, որ տասը շիլլինգ և տասնմեկ պենս վճարելը մաքուր թալան է:

Սկզբում կինն ուզում էր ետ տանել բլուզը, բայց երբ հազավ՝ հիացավ, հատկապես թևքերի ձևը դուր եկավ, ամուսնուն համբուրեց ու ասաց, որ շատ է սիրելի, քանի որ մտածել է իր մասին:

— Հը՛մ...

Չանդիերը սառնորեն նայեց լուսանկարի աչքերին, և աչքերի պատասխանում նույն սառնությունը կար: Աչքերն անկասկած գեղեցիկ էին, գեղեցիկ էր և դեմքը, բայց ինչ-որ ճղճիմ արտահայտություն կար դեմքին: Ինչո՞ւ է այդքան անկյանք ու տիկնային: Աչքերի հանգստությունը զայրացնում էր, վանում և մարտի հրավիրում նրան, դրանց մեջ կիրք չկար, չկար ինքնամոռացություն: Հիշեց թե ինչ էր ասում Գալահերը հարուստ հրեուհիների մասին: «Մուգ, արևելյան աչքեր, — մտածեց, — որքա՛ն երանություն կա դրանց մեջ, որքա՛ն կրքոտ տռփանք»: Ինչո՞ւ ամուսնացավ այդ աչքերի հետ:

Այդ հարցի վրա բռնեց իրեն և վախեցած չորս կողմը նայեց. գեղեցիկ կահույքը, որ վարձով էր վերցրել, նույնպես անշուք էր թվում: Աննին ինքն էր այն ընտրել, և կահույքը հիշեցրեց նրան: Կահույքը նույնպես գեղեցիկ էր ու շինծու: Իր կյանքի հանդեպ մի աղոտ վիրավորանք արթնացավ նրա մեջ: Մի՞թե չի կարող փախչել այդ նեղ բնակարանից: Մի՞թե ուշ է նոր, համարձակ կյանք սկսելու, ինչպես Գալահերն է ապրում: Մի՞թե նա չի կարողանա գնալ Լոնդոն: Կահույքի համար դեռ լրիվ չէր վճարել: Եթե միայն կարողանար գիրք գրել ու տպագրել, դա ուղի կհարթեր նրա համար:

Նրա առջև, սեղանի վրա Բայրոնի բանաստեղծությունների ժողովածուն էր: Շատ զգույշ, որպեսզի երեխային չարթնացնի, ձախ ձեռքով բացեց գիրքը և սկսեց կարդալ առաջին բանաստեղծությունը.

Մինչ ես գալիս եմ Մարգարիտի դամբանիս այցի է
Եվ ծաղիկներով անյունը ծածկում,
Անշարժ է քամին, խաղաղ՝ երեկոն,
Անգամ Չեփյունն է քնած թավուտում:

Դադարեցրեց ընթերցանությունը, զգաց՝ շուրջը բանաստեղծական ռիթմ էր: Որքան թախիծ կար այդ տողերում: Կարո՞ղ է ինքն էլ այդպես գրել, իր հոգու թախիծն արտահայտել բանաստեղծությամբ: Այնքան բան կցանկանար նկարագրել, հենց թեկուզ իր ունեցած զգացումն այսօր կեսօրին՝ Գրաթան կամրջի վրա: Եթե միայն կարողանար նորից վերապրել այդ տրամադրությունը...

Երեխան արթնացավ ու սկսեց լաց լինել: Նա պոկվեց գրքից և փորձեց հանգստացնել նրան, սակայն երեխան չէր լռում: Փոքրիկ Չանդիերը սկսեց օրորել նրան, բայց լացը գնալով ավելի ուժեղացավ: Նա ավելի ու ավելի արագ էր օրորում մինչդեռ աչքերը սկսել էին երկրորդ տունը կարդալ.

Նեղ գերեզմանում անյունն է նրա,
Անյուն որի մեջ...

Ամեն բան անօգուտ էր: Կարդալ անհնար էր: Ամեն ինչ անհնար էր: Երեխայի լացի ձայնն ականջ էր ծակում: Ամեն ինչ անօգուտ էր, անօգուտ: Նա ողջ կյանքում բանտարկյալ էր: Բարկությունից ձեռքերը դողացին եւ հանկարծ, թեքվելով երեխայի վրա, գոռաց.

— Լռի՛ր:

Երեխան մի ակնթարթ լռեց, հետո վախից ցնցվեց ու ճղճաց: Փոքրիկ Չանդիերը վեր թռավ աթոռից և երեխան ձեռքին արագ ետ ու առաջ քայլեց սենյակում: Երեխան ջղաձգորեն լաց էր լինում, մի վայրկյան շունչը տեղն էր բերում և հետո ճշում նոր ուժով: Սենյակի բարակ պատերն արձագանքում էին ձայնը: Փոքրիկ Չանդիերը փորձեց հանգստացնել նրան, բայց մանկական հեկեկոցը գնալով ավելի ջղաձիգ էր դառնում: Նայեց նրա կծկված ու ցնցվող դեմքին և անհանգստացավ: Երեխան յոթ անգամ անընդմեջ հեկեկաց, և Փոքրիկ Չանդիերը նրան սարսափով կրծքին սեղմեց: Իսկ եթե մեռնի՞...

Դուռն աղմուկով բացվեց, և մի երիտասարդ կին շնչակտուր ներս վազեց:

— Ի՞նչ է պատահել: Ի՞նչ է պատահել,— ճչաց նա: Երեխան, լսելով մոր ձայնը, մի հիստերիկ ճիչ արձակեց: — Ոչինչ, ոչինչ, Աննի... ոչինչ... Նա սկսեց լաց լինել...

Կինը գնումները նետեց հատակին ու խլեց երեխային:

— Ի՞նչ ես արել նրան,— բղավում էր կինը՝ աչքերն ամուսնու վրա պտտելով:

Փոքրիկ Չանդիերը մի վայրկյան դիմացավ այդ հայացքին, եւ սիրտը կծկվեց, երբ այնտեղ ստեղծություն տեսավ: Նա սկսեց կակազել:

— Ոչինչի նա... նա սկսեց լաց... լինել... Ես չը... չկարողացա... Ես նրան ոչինչ չեմ արել... Ի՞նչ:

Նրա վրա ուշադրություն չդարձնելով, կինը, երեխային պինդ գրկած, քայլում էր սենյակում և ցածր խոսում:

— Փոքրիկս: Միրելի՛ս: Քեզ վախեցրե՛լ են, արև՛ս: Դե՛, դե՛, մանկիկս: Դե՛, տե՛ս... Ա՛, ա... Մայրիկի պատիկ գառնուկ: Դե՛, դե՛:

Փոքրիկ Չանդիերը զգաց, որ այտերն ամոթից շառագունում են, և մի կողմ քաշվեց լամպի լույսից: Նա լսում էր, մինչդեռ երեխայի հեկեկոցը գնալով ավելի ու ավելի էր նվազում, և փոքրիկ Չանդիերի աչքերում զղջանքի արցունքներ երևացին: